ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 01.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/76

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.11.2017թ. թիվ 03/26-3/21084-17 գրությամբ «ԽԱՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4076 գրության հիման վրա, 17.11.2017թ. թիվ 03/26-3/21084-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ԽԱՔ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«ԽԱՔ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«ԽԱՔ» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հիմնադրվել է 1994թ.-ին: Հիմնադրումից մինչ օրս զբաղվում է կաթնամթերքի արտադրությամբ: Ընկերությունը հանդիսանում է ընտանեկան բիզնեսի կայացած օրինակներից մեկը:

«ԽԱՔ» ՍՊԸ-ն երկար տարիներ հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) մատակարար:

Ընկերության կողմից ապրանքը մշտապես մատակարարվել է ժամանակին և պատշաճ: Յուրաքանչյուր առաջացած խնդրի դեպքում Ընկերությունը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցառումները խնդիրը շտկելու համար:

Ընկերությունը համաձայն չէ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու հետ, քանի որ վստահ է, որ լուծման հիմքերը բավարար չեն, ինչպես նաև գործընթացը գտնվում է քննության փուլում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 21.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել է, որ չի ծանուցվել պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած ենթադրյալ խախտման վերաբերյալ, այլ մատակարարումները շարունակվել են նաև հոկտեմբեր ամսին, մինչդեռ ենթադրյալ խախտումն արձանագրվել է սեպտեմբեր ամսին:

3. **ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկ-ները և դիրքորոշումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4076 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՔ» ՍՊԸ-ի

միջև 26.02.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/16-9» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 3.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ Պատվիրատուն 30.10.2017թ. «թթվասեր տեղական՝ 16 422.2 կգ» և «կաթնաշոռ դասական՝ 11 988.2 կգ» ապրանքատեսակների մասով միակողմանի լուծել է վերոնշյալ պայմանագիրը և 30.01.2017թ. կնքված թիվ 2 համաձայնագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 21.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ պայմանագիրը լուծվել է սահմանված կարգով, հիմք ընդունելով Ընկերության կողմից թույլ տրված պայմանագրային պարտավորության խախտման փաստը: Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ Պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած՝ Ընկերության կողմից անպատշաճ որակի ապրանք մատակարարելու վերաբերյալ արձանագրված դեպքի մասին Ընկերությունը գրավոր չի ծանուցվել:

Միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.11.2017թ. թիվ ԴՎԱ/4228 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է «ԽԱՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ հավելյալ փաստաթղթեր, այդ թվում նաև՝ «ԽԱՔ» ՍՊԸ-ին ուղղված 14.06.2016թ. թիվ ԴՎԱ/1619 ծանուցման պատճենը, հայտնելով նաև, որ արձանագրված նմանատիպ խախտման մյուս դեպքերի մասով Ընկերությունը ծանուցվել է բանավոր:

4. ՍՑ-ԱՄ-2017/76 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/76 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՔ» ՍՊԸ-ի միջև 26.02.2015թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/16-9» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով «ԽԱՔ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում գնորդին (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը) կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված թթվասեր և կաթնաշոռ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

3. ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՔ» ՍՊԸ-ի միջև 30.01.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/16-9» ծածկագրով պայմանագրի թիվ 2 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր), որով Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Համաձայնագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

4. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի՝ ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված 25.09.2017թ. թիվ ԴՎԱ/3221 գրության համաձայն՝ «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. ՀՀ ՊՆ կենտրոնական զինվորական հոսպիտալ մատակարարված 62 կգ թթվասերի և 62 կգ կաթնաշոռի խմբաքանակներից «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի կողմից 14.09.2017թ. ՆՏԱԴ պետի ՊԺԿ-ի 14.09.2017թ. թիվ ԴՎՔ/3067 գրության համաձայն իրականացվել են նմուշառումներ և ենթարկվել լաբորատոր հետազոտության, որի արդյունքներով «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված թթվասերի և կաթնաշոռի նմուշներն իրենց ֆիզիկոքիմիական և մանրէաբանական ցուցանիշներով (ԱՑԽՄ) չեն համապատասխանել պահանջվող նորմերին:

Նույն գրությամբ ամրագրվել է նաև այն, որ Ընկերության կողմից բազմիցս մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, ուստի անհրաժեշտ է միակողմանի լուծել պայմանագիրը:

5. Պատվիրատուն 13.11.2017թ. թիվ ԴՎԱ/3912 գրությամբ դիմել է «ԽԱՔ» ՍՊԸ-ին, հայտնելով, որ Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից մատակարարվել է անպատշաճ որակի թթվասեր և կաթնաշոռ:

Նշված գրությամբ Պատվիրատուն հայտնել է նաև, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «ա» ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.10.2017թ. միակողմանի լուծել է «ՇՀԱՊՁԲ-7/16-9» ծածկագրով պայմանագրին կից 30.01.2017թ. կնքված թիվ 2 համաձայնագիրը՝ ըստ համապատասխան չափաբաժինների:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.11.2017թ. թիվ 03/26-3/21084-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4076, 23.11.2017թ. թիվ ԴՎԱ/4228 գրությունները և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը (466 հոդվածի 2-րդ կետ):

2. Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

1) ***մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում.***

2) բազմիցս խախտվել են ապրանքների մատակարարման ժամկետները:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՔ» ՍՊԸ-ի միջև 26.02.2015թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/16-9» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով «ԽԱՔ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում գնորդին (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը) կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված թթվասեր և կաթնաշոռ, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետով սահմանվել է, որ հաջորդող տարիների համար նախատեսված Ապրանքի մատակարարումը կիրականացվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՔ» ՍՊԸ-ի միջև 30.01.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/16-9» ծածկագրով պայմանագրի թիվ 2 համաձայնագիրը, որով Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Համաձայնագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայնագրի թիվ 1 հավելված գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից մատակարարման ենթակա են հետևյալ ապրանքատեսակները, հետևյալ քանակներով և ժամկետներում.

• Թթվասեր տեղական (Երևան-14172 զորամաս) - 4000 կգ, որից 1100 կգ՝ 1-ին եռամսյակ, 1100 կգ՝ 2-րդ եռամսյակ, 700 կգ՝ 3-րդ եռամսյակ, 1100 կգ՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ.

• Թթվասեր տեղական (Երևան-88865 զորամաս)- 4500 կգ, որից 1125 կգ՝ 1-ին եռամսյակ, 1125 կգ՝ 2-րդ եռամսյակ, 1125 կգ՝ 3-րդ եռամսյակ, 1125 կգ՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ.

• Թթվասեր տեղական (Երևան-32822 զորամաս)- 3000 կգ, որից 750 կգ՝ 1-ին եռամսյակ, 750 կգ՝ 2-րդ եռամսյակ, 750 կգ՝ 3-րդ եռամսյակ, 750 կգ՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ.

• Թթվասեր տեղական (Երևան-14203 զորամաս)- 17902 կգ, որից 4475 կգ՝ 1-ին եռամսյակ, 4475 կգ՝ 2-րդ եռամսյակ, 4475 կգ՝ 3-րդ եռամսյակ, 4477 կգ՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ.

• Կաթնաշոռ դասական (Երևան-14172 զորամաս)- 4500 կգ, որից 1200 կգ՝ 1-ին եռամսյակ, 1200 կգ՝ 2-րդ եռամսյակ, 900 կգ՝ 3-րդ եռամսյակ, 1200 կգ՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ.

• Կաթնաշոռ դասական (Երևան-88865 զորամաս)- 4500 կգ, որից 1125 կգ՝ 1-ին եռամսյակ, 1125 կգ՝ 2-րդ եռամսյակ, 1125 կգ՝ 3-րդ եռամսյակ, 1125 կգ՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ.

• Կաթնաշոռ դասական (Երևան-32822 զորամաս)- 3000 կգ, որից 750 կգ՝ 1-ին եռամսյակ, 750 կգ՝ 2-րդ եռամսյակ, 750 կգ՝ 3-րդ եռամսյակ, 750 կգ՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ.

• Կաթնաշոռ դասական (Երևան-14203 զորամաս)- 13123 կգ, որից 3280 կգ՝ 1-ին եռամսյակ, 3280 կգ՝ 2-րդ եռամսյակ, 3280 կգ՝ 3-րդ եռամսյակ, 3283 կգ՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 17.12.2017թ.

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի՝ ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված 25.09.2017թ. թիվ ԴՎԱ/3221 գրության համաձայն՝ «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. ՀՀ ՊՆ

կենտրոնական զինվորական հոսպիտալ մատակարարված 62 կգ թթվասերի և 62 կգ կաթնաշոռի խմբաքանակներից «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի կողմից 14.09.2017թ. ՆՏԱԴ պետի ՊԺԿ-ի 14.09.2017թ. թիվ ԴՎՔ/3067 գրության համաձայն իրականացվել են նմուշառումներ և ենթարկվել լաբորատոր հետազոտության, որի արդյունքներով «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված թթվասերի և կաթնաշոռի նմուշներն իրենց ֆիզիկոքիմիական և մանրէաբանական ցուցանիշներով (ԱՑԽՄ) չեն համապատասխանել պահանջվող նորմերին:

«Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի 22.09.2017թ. թիվ 1017 փորձարկման արձանագրության համաձայն՝ 14.09.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փորձարկման ներկայացված, «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. մատակարարված «9 % կաթնաշոռ» և «20% թթվասեր» ապրանքատեսակները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 1925-Ն որոշմամբ, ՄՄ ՏԿ 033/2013, 021/2011-ով սահմանված պահանջներին և անվանմանը:

Պայմանագրի 3.2.5 կետով սահմանվել է, որ գնորդը՝ տվյալ դեպքում Պատվիրատուն, պարտավոր է Ապրանքի քանակի, տեսականու, ***<u>որակի մասին</u> սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:***

22.09.2017թ. թիվ 1017 փորձագիտական եզրակացության համաձայն՝ փորձաքննության ենթարկվել են «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. մատակարարված «թթվասեր» և «կաթնաշոռ» ապրանքատեսակները, որոնց որակի վերաբերյալ «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի կողմից եզրակացությունը տրամադրվել է 22.09.2017թ. և որի համաձայն մատակարարված Ապրանքի որակը չի համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.09.2017թ. տրամադրված եզրակացության հիման վրա հայտնաբերելով «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված Ապրանքի որակի մասին պայմանի խախտում, այն հայտնաբերելուց հետո անմիջապես կամ Պայմանագրի 3.2.5 կետով նախատեսված

ողջամիտ ժամկետում չի ծանուցել Ընկերությանը հայտնաբերված խախտման վերաբերյալ:

Միևնույն ժամանակ Պայմանագրի թիվ 2 Համաձայնագրի շրջանակներում իրականացված մատակարարումների հիման վրա Պատվիրատուի կողմից մատնանշված ստացողների և Ընկերության կողմից կազմված թիվ 38-41 հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ Ընկերության կողմից մատակարարումներն իրականացվել են և Ապրանքը Պատվիրատուի կողմից ընդունվել է նաև 2017թ. հոկտեմբերի ամսին, այսինքն համապատասխան խախտումը հայտնաբերելուց հետո:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.10.2017թ. միակողմանի լուծել է ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՔ» ՍՊԸ-ի միջև կնքված Բայմանագիրը՝ 30.01.2017թ. կնքված թիվ 2 համաձայնագրի հետևյալ չափաբաժինների մասով՝

1. Թթվասեր տեղական՝
   - Երևան-14172 զորամաս- 423.4 կգ՝ 1-ին եռամսյակից, 1100 կգ՝ 2-րդ եռամսյակից, 700 կգ՝ 3-րդ եռամսյակից և 1100 կգ՝ 4-րդ եռամսյակից.
   - Երևան-88865 զորամաս- 739.4 կգ՝ 1-ին եռամսյակից և 1125 կգ՝ 4-րդ եռամսյակից.
   - Երևան -32822 զորամաս- 371.6 կգ՝ 1-ին եռամսյակից, 750 կգ՝ 2-րդ եռամսյակից, 750 կգ՝ 3-րդ եռամսյակից.
   - Երևան-14203 զորամաս- 4136 կգ՝ 3-րդ եռամսյակից և 4477 կգ՝ 4-րդ եռամսյակից
2. Կաթնաշոռ դասական՝
   - Երևան-14172 զորամաս- 368.6 կգ՝ 1-ին եռամսյակից, 1200 կգ՝ 2-րդ եռամսյակից, 900 կգ՝ 3-րդ եռամսյակից և 1200 կգ՝ 4-րդ եռամսյակից.
   - Երևան-88865 զորամաս- 739 կգ՝ 3-րդ եռամսյակից և 1125 կգ՝ 4-րդ եռամսյակից.
   - Երևան -32822 զորամաս- 371.6 կգ՝ 1-ին եռամսյակից, 750 կգ՝ 2-րդ եռամսյակից, 750 կգ՝ 3-րդ եռամսյակից և 750 կգ՝ 4-րդ եռամսյակից.
   - Երևան-14203 զորամաս- 551 կգ՝ 3-րդ եռամսյակից և 3283 կգ՝ 4-րդ եռամսյակից:

Այսպես Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7 կետի 3.1.7.1 ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ***մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, <u>որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում:</u>***

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրի 3.1.7 կետի 3.1.7.1 ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու համար անհրաժեշտ են հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

ա) մատակարարված ապրանքի անպատշաճ որակի լինելը.

բ) գնորդի համար ընդունելի ժամկետում այն փոխարինելու անհնարինությունը:

Վերը նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայտնաբերելով Պայմանագրի 3.2.5 կետում նշված Ապրանքի որակի պայմանների խախտման փաստը, Պատվիրատուն պարտավոր է անմիջապես կամ ողջամիտ ժամկետում ծանուցել վաճառողին խախտման վերաբերյալ, ընդ որում Պայմանագիրը էական խախտման «ա» ենթակետով նախատեսված հիմքով լուծելը կդիտարկվի իրավաչափ այն դեպքում, երբ 3.2.5 կետով սահմանված կարգով Ընկերությանը ծանուցելուց հետո, անպատշաճ որակի ապրանքը Ընկերության կողմից չի փոխարինվում գնորդի համար ընդունելի ժամկետներում:

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրի 3.2.5 կետով նախատեսված խախտման հայտնաբերման մասին գործում առկա «ԽԱՔ» ՍՊԸ-ին ուղղված միակ գրավոր ծանուցումը վերաբերում է կողմերի միջև 29.01.2016թ. կնքված Պայմանագրի թիվ 1 համաձայնագրի հիման վրա իրականացված մատակարարումների շրջանակներում թույլ տրված խախտմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածը սահմանում է, որ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Պայմանագրի 3.4-րդ կետի 3.4.6 ենթակետի համաձայն՝ վաճառողը պարտավոր է գնորդին (ստացողին) հանձնել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված տեսականու և որակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

Միևնույն ժամանակ վաճառողի կողմից անպատշաճ որակի ապրանք մատակարարելը դեռևս հիմք չի հանդիսանում պայմանագիրը էական խախտման հիմքով միակողմանի լուծելու համար, քանի որ անհրաժեշտ է, նաև որ վաճառողի կողմից անպատշաճ որակի ապրանքը չփոխարինվի գնորդի համար ընդունելի ժամկետում: Իսկ վերջին պայմանը ապահովելու համար Պատվիրատուն պարտավոր էր կատարել Պայմանագրի 3.2.5 կետով նախատեսված Ընկերությանը ծանուցելու պարտականությունը: Մինչդեռ գործում առկա փաստաթղթերի համաձայն՝ Պատվիրատուն չի ծանուցել Ընկերությանը և չի սահմանել անպատշաճ որակի ապրանքը փոխարինելու իր համար ընդունելի ժամկետ:

Անդրադառնալով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՔ» ՍՊԸ-ի միջև 26.02.2015թ. կնքված և 30.10.2017թ. միակողմանի լուծված պայմանագրի շրջանակներում «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման հարցին, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, քանի որ Պատվիրատուն չկատարելով պայմանագրի 3.2.5 կետով նախատեսված՝ Ապրանքի որակի խախտման վերաբերյալ Ընկերությանը ծանուցելու իր պարտականությունը և չսահմանելով այն փոխարինելու՝ պատվիրատուի համար ընդունելի ժամկետ, միակողմանի լուծել է Պայմանագիրն էական խախտման հիմքով: Մինչդեռ «ԽԱՔ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի էական խախտման փաստը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի և Պայմանագրի 3.1.7.1 ենթակետի «ա» պարբերության, առկա կլիներ այն դեպքում, երբ «ԽԱՔ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով մատակարարված ապրանքի որակի անպատշաճ լինելու վերաբերյալ, չփոխարիներ այն Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում: Հետևաբար Պատվիրատուի կողմից 26.02.2015թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/16-9» գնման պայմանագիրը միակողմանի լուծվել է նույն պայմանագրի 3.1.7 կետի խախտմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին***

նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ԽԱՔ» ՍՊԸ-ն թույլ չի տվել 26.02.2015թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/16-9» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «ԽԱՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.11.2017թ. թիվ 03/26-3/21084-17 գրությամբ «ԽԱՔ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04203287) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**